


ԾԱՆՈԹԱՑԵՔ ՖԵԼԻՔՍԻ ՀԵՏ

# Հիսուսի հետևորդները Նիկարագուայում

## Ինչպես է Ֆելիքսը հետևում Հիսուսին

Ֆելիքսը հետևում է Հիսուսին՝ հնազանդ լինելով։ Նա աղոթում է, փորձում է պահել պատվիրանները և գնում է եկեղեցի։ «Ես շատ բան եմ սովորում Երեխաների միությունում»,- ասում է նա։ «Երեխաների միությունում շատ երեխաներ կան և մենք սովորում ենք Հիսուս Քրիստոսի մասին»։

Ֆելիքսը սիրում է խաղալ իր զարմիկի հետ։ Բայց երբեմն նա և իր զարմիկը չեն կարողանում լեզու գտնել։ «Երկնային Հայրն օգնում է ինձ համբերատար լինել»,- ասում է նա։

Ֆելիքսը նաև օգնում է ուրիշներին։ Դպրոցում Ֆելիքսը նկատեց, որ դասընկերը ուտելու բան չունի։ Ֆելիքսը կիսվեց իր ուտելիքով։ Նա նաև հոգ է տանում իր կրտսեր քրոջ մասին։ Նրան զգուշությամբ կերակրում է փոքրիկ կտորներով։






### Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին։



**Նշեք որևէ բան, որ դուք արել եք՝ Հիսուսին հետևելու համար։ Գրեք և պատմեք մեզ։ Դարձերեսի շապիկին կարող եք տեսնել, թե ինչպես անել դա։**




### Ֆելիքսի մասին

**ՏԱՐԻՔԸ.** 7

**ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ.** Մանագուա (Նիկարագուա)

**ԼԵԶՈՒՆ.** իսպաներեն

**ՆՊԱՏԱԿԸ.** 1) Դառնալ տիեզերագնաց և թռչել լուսին և միգուցե Մարս։ 2) Մի օր հավեր պահել։

**ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.** Սովորել տիեզերքի մասին, դաշնամուր նվագել և ուտելիք պատրաստել

**ԸՆՏԱՆԻՔԸ.** Ֆելիքսը, մայրը, հայրը և կրտսեր քույրը

### Ինչ է նա սիրում

**ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.** Երբ Հիսուսն այցելեց Ամերիկա և բժշկեց բոլոր մարդկանց (3 Նեփի 17)

**ՏՈՆԸ.** Սուրբ Ծնունդ

**ՄԻՐԳԸ.** Ելակ և ձմերուկ

**ԳՈՒՅՆԸ.** կապույտ

**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ.** “I Will Walk with Jesus” (*Friend*, Feb. 2020, 27)։